ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԱՄԱՐ

1. Ի՞ՆՉ Է ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼԸ

Մարդու մասին բոլոր այն տեղեկությունները, որոնք թույլ են տալիս կամ կարող են թույլ տալ ուղղակի կամ անուղղակի ճանաչել մարդուն, անձնական տվյալներ են: Օրինակ՝ անունը, ազգանունը, լուսանկարը, ծննդյան օրը:

«Հատուկ կատեգորիայի անձնական տվյալների» մշակումը կարող է իրականացվել միայն անձի համաձայնությամբ, բացառությամբ, երբ տվյալի մշակումն ուղղակիորեն նախատեսված է օրենքով: Այդպիսի տվյալներ են, օրինակ, մարդու ռասսայական, էթնիկ պատկանելությանը, քաղաքական հայացքներին, առողջական վիճակին ու սեռական կյանքին վերաբերող անձնական տվյալները:

Մեկ այլ կարևոր խումբ են կենսաչափական անձնական տվյալները, որոնց համար օրենքը ևս նախատեսում է պաշտպանության հատուկ միջոցներ: Դրանք են անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները բնութագրող տեղեկությունները:

Այս տվյալները բացառիկ են եւ մշտական յուրաքանչյուրի համար (մատնահետք, ԴՆԹ կոդ, ստորագրություն):

Սրանք մարդուն անսխալ նույնականացնում են:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք,
3-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածներ

2. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ. ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անձնական տվյալների մշակումը (օրինակ՝ հավաքումը, պահպանումը, փոփոխումը, փոխանցումը) պետք է իրականացվի օրինականության սկզբունքին համապատասխան:

Անձնական տվյալները պետք է մշակվեն միայն.

- օրենքի պահանջների պահպանմամբ,
- օրինական և որոշակի նպատակներով,
- առանց անձի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով:

Անձնական տվյալներ մշակելը օրինական է, եթե

- օրենքով ուղղակի նախատեսված է, կամ
- առկա է անձի համաձայնությունը, կամ
- տվյալները ձեռք են բերվել անձնական տվյալների հանրամատչելի աղբյուրներից:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք,
4-րդ և 8-րդ հոդվածներ

3. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ. ՀԱՄԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ

Անձնական տվյալների մշակման օրինական նպատակին հասնելու միջոցները պետք է լինեն **պիտանի, անհրաժեշտ և չափավոր**:

Համաչափության սկզբունքը պահանջում է, որ անձնական տվյալները մշակվեն այն նվազագույն քանակով եւ պահպանվեն այն նվազագույն ժամկետով, որն անհրաժեշտ է օրինական նպատակին հասնելու համար: Տվյալները պետք է ջնջվեն նպատակին հասնելուն պես: Տվյալները կարող են ապանձնավորվել, եթե մշակողը ցանկանում է դրանք պահել սահմանած ժամկետից հետո, և երբ տվյալներն այլևս չեն ծառայում իրենց սկզբնական նպատակին:

Արգելվում է այնպիսի անձնական տվյալների մշակումը, որոնք անհրաժեշտ չեն տվյալները մշակելու նպատակի համար կամ անհամատեղելի են դրա հետ: Օրինակ, երեխային դպրոց ընդունելիս արգելվում է ծնողների քաղաքական հայացքների մասին տվյալներ պահանջելը:

Արգելվում է անձնական տվյալների մշակումը, եթե տվյալները մշակելու նպատակին հնարավոր է հասնել ապանձնավորված կերպով:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 5-րդ հոդված

4. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.

ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մշակվող անձնական տվյալները պետք է լինեն

- ամբողջական,
- ճշգրիտ,
- պարզ և
- թարմացված:

Այս սկզբունքը պահպանելու պարտավորությունը կրում է տվյալներ մշակող մարմինը:

Անձնական տվյալ մշակող ՏԻՄ կամ պետական կառավարման մարմինները պետք է աշխատեն չծանրաբեռնել քաղաքացիներին անհրաժեշտ որեւէ անձնական տվյալ ներկայացնելու պարտականությամբ, եթե կարող են այդ անձնական տվյալը ստանալ այլ մարմնից տեղեկատվական համակարգով:

Տվյալ դեպքում անձնական տվյալը տեղեկատվական համակարգերից հնարավոր է ձեռք բերել, եթե ՏԻՄ-ը կամ պետական կառավարման մարմինն օրենքով ունի այդ տվյալը մշակելու իրավունք, ինչպես նաեւ տեղեկացրել է անձին, որ այլեւս չկա պահանջվող տվյալն անձամբ ներկայացնելու անհրաժեշտություն:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք,
6-րդ և 7-րդ հոդվածներ

5. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Երբ ՏԻՄ կամ պետական կառավարման մարմինը հավաքում կամ օգտագործում են քաղաքացու անձնական տվյալները, քաղաքացին իրավունք ունի տեղեկություն ստանալ հետեւյալի մասին.

- ինչ անձնական տվյալներ է մշակում մարմինը (հավաքում, պահպանում և այլն),
- անձնական տվյալները մշակելու փաստի մասին,
- ինչ նպատակով և օրինական հիմքերով են մշակվում անձնական տվյալները,

- մշակվող անձնական տվյալների ցանկը և դրանք ձեռք բերելու աղբյուրը,
- տվյալները մշակողի անվանումը, նրա գտնվելու վայրը,
- տվյալները մշակելու ժամկետները,
- սուբյեկտները, որոնց տրամադրվել կամ կարող են տրամադրվել անձնական տվյալները,
- արդյոք տվյալները կարող են փոխանցվել երրորդ երկիր:

Այս տեղեկություններն ստանալու համար անհրաժեշտ է պարզապես դիմել տվյալներ մշակող մարմնին էլեկտրոնային կամ թղթային հարցմամբ: Տեղեկությունները տվյալների սուբյեկտին տրամադրվում են անվճար, 5-օրյա ժամկետում:

Առցանց հարցումները քաղաքացին կարող է ներկայացնել ՏԻՄ կառավարման տեղեկատվական հարթակով, որը հասանելի է ՏԻՄ կայքերում: Պետական կառավարման մարմիններին առցանց հարցումը կարելի է ներկայացնել էլեկտրոնային հարթակի միջոցով՝

www.e-request.am

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 15-րդ հոդված

6. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ. ՏՎՅԱԼՆԵՐՆ ՈՒՂՂԵԼՈՒ, ՓՈԽԵԼՈՒ, ՋՆՋԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Անձն իրավունք ունի պահանջել ուղղել իր անձնական տվյալները, եթե մշակվող տվյալներում առկա են տառասխալներ, թվաբանական սխալներ կամ այլ վրիպակներ, ինչպես նաև, երբ տվյալները թարմացված չեն: Օրինակ, երբ քաղաքացին փոխել է իր բնակության հասցեն, անձնագիրը կամ հեռախոսահամարը:

Անձն իրավունք ունի պահանջել ուղեփակել կամ ոչնչացնել իր անձնական տվյալները, եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակման նպատակին հասնելու համար:

Անձնական տվյալ մշակող մարմինը պարտավոր է անձի դիմումն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում կատարել պահանջվող գործողությունը, իսկ մերժելու դեպքում՝ դիմումը ստանալու օրվանից 5 օրյա ժամկետում տրամադրել պատճառաբանված գրավոր որոշում:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք,
15-րդ և 18-րդ հոդվածներ

Անձն իրավունք ունի պահանջել ուղեփակել կամ ոչնչացնել իր անձնական տվյալները, եթե անձնական տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակման նպատակին հասնելու համար:

Անձնական տվյալ մշակող մարմինը պարտավոր է անձի դիմումն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում կատարել պահանջվող գործողությունը, իսկ մերժելու դեպքում՝ դիմումը ստանալու օրվանից 5 օրյա ժամկետում տրամադրել պատճառաբանված գրավոր որոշում:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենք,
15-րդ և 18-րդ հոդվածներ

7. Ի՞ՆՉ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ ԿԱՐՈՂ Է ՈՒՆԵՆԱԼ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՐՏԱՀՈՍՔԸ

Անձնական տվյալների պաշտպանությունը պետության պարտականությունն է: Սակայն ցանկացած անձ իր անձնական տվյալների հանդեպ պետք է դրսևորի ողջամիտ զգուշավորություն: Տեղեկատվական հասարակությունն իր բոլոր առավելություններով առաջացրել է առանձնահատուկ վտանգներ՝ անձնական տվյալներ որսալու և դրանք ի վնաս անձի օգտագործելու: Անձնական տվյալների անպաշտպան լինելու հետևանքները կարող են արտահայտվել այսպես կոչված «ինքնության առեւանգմամբ», երբ անձի անունից կատարվում են գործողություններ, գործարքներ ի վնաս իրեն, օրինակ, շորթելուն կամ անձի պատիվն ու արժանապատվությունը արատավորելուն ուղղված գործողությամբ:

8. ՈՒՄ ԴԻՄԵԼ, ԵՐԲ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐՆ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԵՆ ՄՇԱԿՎԵԼ

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը խախտելն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ տարբեր խախտումների համար սահմանելով 50-ից 500 հազար դրամ տուգանքի նշանակում:

Անձնական տվյալների հետ կապված իրավունքները պաշտպանելու համար անձը կարող է դիմել.

- ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալություն,
- Դատարան,

- եթե առկա են հանցագործության հատկանիշներ՝ նաև ոստիկանություն:
- Կարող եք նաեւ դիմել մասնագիտացած հասարակական կազմակերպությունների աջակցությանը, ինչպես, օրինակ, Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ին:

ՀՀ ԱՆ անձնական տվյալների պաշտպանության գործակալության հասցեն եւ կապի միջոցներն են.
Հեռ.: +37410 59 41 95
Էլ. փոստ: hayrapetyan.gevorg@moj.am; armenianpdpa@gmail.com
Հասցե: 0051 ք. Երևան, Կոմիտաս 54բ
ՖԲ: https://www.facebook.com/PersonalDataArmenia

Քաղաքացու հուշաթերթիկները պատրաստել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնը Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) երեւանյան գրասենյակի ֆինանսավորմամբ:

20 Տարի
Միասին Տեղեկատվության Ազատության Համար

2001 - 2021
ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Էլ. փոստ՝ foi@foi.am
կայք՝ www.foi.am, www.givemeinfo.am
Հասցե՝ ք. Երևան, Բուզանդի 1/3. 4-րդ հարկ